

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ

**ԾՈՎՈՎ ՀԱՓՇՏԱԿՎԱԾԸ.
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ**

(Նկարչի ծննդյան 200-ամյակի առթիվ)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2017

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

АРАРАТ АГАСЯН

**ЗАЧАРОВАННЫЙ МОРЕМ:
ИВАН (ОВАННЕС) АЙВАЗОВСКИЙ**

(К 200-летию со дня рождения художника)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2017

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS

ARARAT AGHASYAN

**ENCHANTED BY THE SEA:
IVAN (HOVHANNES) AIVAZOVSKY**

(On the 200th Anniversary of painter's birthday)

YEREVAN
«GITUTYUN» PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2017

ՀՏԴ 75
ԳՄԴ 85.14
Ա 467

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՂԱՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

Ա 467 Ծովով հափշտակվածը. Հովհաննես Այվազովսկի (Նկարչի ծննդյան 200-ամյակի առթիվ)/Ա. Աղասյան.– Եր. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017.–88 էջ+8 էջ նկար:

Հովհաննես Այվազովսկին (1817-1900) հայազգի առաջին նկարիչն էր, որն իր կյանքի օրոք միջազգային լայն ճանաչում գտավ և որի լավագույն կտավները, հատկապես՝ ծովային տեսարանները, դասվեցին համաշխարհային կերպարվեստի առավել նշանակալից ստեղծագործությունների շարքին:

Иван (Ованнес) Айвазовский (1817-1900) был первым художником армянского происхождения, кто еще при жизни удостоился широкого международного признания и чьи лучшие полотна, особенно морские пейзажи, были причислены к наиболее значительным произведениям мирового изобразительного искусства.

Ivan (Hovhannes) Aivazovsky (1817-1900) was the first painter of Armenian origin who earned broad recognition during his lifetime. His best works – unmatched marines in particular – were placed at the same level as the outstanding creations of the world visual arts.

ՀՏԴ 75
ԳՄԴ 85.14

ISBN 978-5-8080-1291-2

© Գիտություն, 2017

© Արարատ Աղասյան, 2017

Հրատարակվում է
ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները
ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ

Издается
при содействии Всеармянского фонда финансирования
арменоведческих исследований

Published
with the support of All Armenian Foundation Financing
Armenological Studies

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի կողմից անցկացված մրցույթի արդյունքում ֆինանսավորվող «Հայ երաժիշտների, նկարիչների և ճարտարապետների գործունեությունը Ղրիմում» գիտական ծրագրի շրջանակներում:

Исследование выполнено при поддержке Государственного комитета по науке МОН РА и Российской и Ново-Нахичеванской Епархии Армянской апостольской церкви в рамках научного проекта “Деятельность армянских музыкантов, художников и архитекторов в Крыму”.

The research is supported by the RA MES State Committee of Science and the Russian and New Nakhichevan Diocese of the Armenian Apostolic Church, within the frames of the research project “The activity of Armenian musicians, painters and architects in Crimea”.

Հովհաննես Այվազովսկին (1817–1900) հայազգի առաջին նկարիչն էր, որի անունը դեռ իր կենդանության օրոք միջազգային լայն ճանաչում գտավ և որի լավագույն կտավները դասվեցին համաշխարհային կերպարվեստի պատմության մեջ երբևէ ստեղծված առավել նշանակալից երևույթների շարքին: Նա գեղարվեստական նոր մակարդակի բարձրացրեց ծովանկարի ժանրը, թեև իր ստեղծագործական երկարատև ու արգասավոր կյանքի ընթացքում, ծովային բազմաթիվ տեսարաններից և ծովամարտերից բացի, վրձնել է նաև «ցամաքային» արևաշող և ձմեռային սառնաշունչ բնանկարներ, դիմանկարներ ու անձնանկարներ, կենցաղային մոտիվներով, բիբլիական և պատմական թեմաներով ու կերպարներով ներշնչված պատկերներ:

Այվազովսկին նկարչության ասպարեզ մտավ ուշ ռոմանտիզմի դարաշրջանում և մինչև վերջ հավատարիմ մնաց այդ ուղղությանը՝ չտարվելով եվրոպական և ռուսական արվեստում ու գրականության մեջ ժամանակի ընթացքում տարածում գտած նոր հոսանքներով: Թերևս դա էր պատճառներից մեկը, որ XIX դարի վերջին քառորդին հանդես եկած երիտասարդ քննադատներից ոմանք, օրինակ՝ «ազատ արվեստի» ջատագով, գեղապաշտ նկարիչ և արվեստաբան Ալեքսանդր Բենուան, նրան համարեցին գաղափարական ու գեղագիտական հրատապ պահանջներին այլևս չհամապատասխանող, ժամանակավրեպ արվեստագետ¹:

Սակայն ռուսական արվեստի և գրականության՝ նկարչին

¹ Տե՛ս, օրինակ. **Бенуа А.Н.** История русской живописи в XIX веке. Санкт-Петербург, 1902, стр. 201-202.

ճանաչած, նրա ստեղծագործական ուղուն հետևած առաջադեմ գործիչներից շատերը՝ Իվան Կոիլովը, Ալեքսեյ Վենեցիանովը, Օրեստ Կիպրենսկին, Վասիլի Ժուկովսկին, Միխայիլ Գլինկան, Վիսարիոն Բելինսկին, Վլադիմիր Ստասովը, Անտոն Ռուբինշտեյնը, Իվան Կրամսկոյը, իսկ ավելի ուշ՝ Ֆեոդոր Դոստոևսկին, Իլյա Ռեպինը, Անտոն Չեխովը և ուրիշներ, Այվազովսկու ստեղծագործության հանդեպ ունեցած դրական կամ բացասական վերաբերմունքով հանդերձ, բարձր են գնահատել նրա դերն ու վաստակը ռուսական կերպարվեստի զարգացման գործում:

XIX դարի վերջին և, հատկապես, 1900-ական թվականներին, երբ ռուսական արվեստում ու գրականության մեջ սկիզբ առավ և տարածում գտավ ռոմանտիզմից բխող սիմվոլիստական հոսանքը, Այվազովսկու ստեղծագործության նկատմամբ հետաքրքրության նոր ալիք բարձրացավ: Հենց այդ ժամանակ՝ 1901-ին, նկարչի մահից մեկ տարի անց, ընթերցողների սեղանին դրվեց ծովանկարչին նվիրված առաջին մենագրությունը²: Այսօր էլ չի նվազել հետաքրքրությունը Այվազովսկու՝ ժամանակի փորձությունը բռնած և արդեն վաղուց դասականացած արվեստի հանդեպ: Նրա լավագույն կտավները կայուն պահանջարկ ունեն գեղարվեստական շուկայում, անընդհատ հանվում են աճուրդի ու վաճառվում աստղաբաշխական գներով:

Այվազովսկին Ռուսաստանում և արտասահմանում շուրջ 125 անհատական ցուցահանդես է ունեցել: Նա ընտրվել է Հոմի, Ֆլորենցիայի, Փարիզի, Ամստերդամի և Շտուտգարտի գեղարվեստի ակադեմիաների պատվավոր անդամ: Նրան պե-

² Տե՛ս. **Кузьмин Н.Н.** Воспоминания о профессоре И.К. Айвазовском. Санкт-Петербург, 1901.

տական բարձրագույն աստիճանների շքանշաններ ու մեդալներ են շնորհել Ռուսաստանի, Ֆրանսիայի, Օսմանյան կայսրության և այլ երկրների իշխանությունները:

Նկարչի ստեղծագործություններից շատերը դիտողին գրավում են ոչ միայն տեխնիկական անթերի վարպետությամբ, այլև բանաստեղծական տրամադրությամբ, ռոմանտիկական ոգով ու շնչով, դրամատիկական խոր ապրումներով: Այվազովսկու՝ ծովային աղետաբեր, առաջին հայացքից անելանելի թվացող տեսարաններում անգամ կա ելքի, փրկության որևէ ակնարկ՝ լինի դա մոայլ ամպերը ճեղքող արևի շողը, օդում ոչնչից գոյացող ծիածանը կամ էլ փարոսի ընդադուտ լույսը...

Հովհաննես Այվազովսկին ծնվել է 1817 թվականի հուլիսի 17-ին Թեոդոսիայում՝ XIX դարի սկզբին Բուկովինայից³ Ղրիմ եկած և Հռիփսիմե անունով հայուհու հետ ամուսնացած մանրավաճառ Կոստանդին (Գևորգ) Գրիգորի Գայվազովսկու (Այվազյան) բազմազավակ՝ երեք տղա ու երկու աղջիկ լույս աշխարհի բերած և տեղի հայկական Ս. Սարգիս եկեղեցում նրանց կնքած ընտանիքում⁴: Հովհաննեսը երրորդ որդին էր՝ հետագայում Հայ առաքելական եկեղեցու արքեպիսկոպոս Գաբրիելից և միջնեկ եղբորից՝ Գրիգորից հետո:

Նախնական կրթությունը նա ստացել է նույն եկեղեցուն առընթեր ծխական դպրոցում, որտեղ սովորել է հինգ տարի՝ 1825-1830 թվականներին: Հովհաննեսն ուշիմ ու շնորհալի երե-

³ Նշված ժամանակաշրջանում Բուկովինան ընդգրկված էր Ավստրո-Հունգարական կայսրության կազմում: Ներկայումս այդ երկրամասի հյուսիսային հատվածը պատկանում է Ուկրաինային, իսկ հարավայինը՝ Ռումինիային:

⁴ Նույն եկեղեցու չափաբերական մատյանում արվել է ապագա ծովանկարչի ծննդյան մասին վկայող հետևյալ գրությունը. «Գևորգ Այվազյանի որդի Հովհաննեսը» (տե՛ս. Айвазовский. Документы и материалы. Ереван, 1967, стр. 9):

խա էր՝ արդեն այդ տարիքում նա ինքնուրույն սովորեց ջութակ նվագել և սկսեց նկարել: Հրաշամանուկ տղայի նկարչական ընդունակություններին ուշադրություն դարձրեց Թեոդոսիայի ճարտարապետ Յակով Կոխը, որը նրան նկարչության առաջին դասերը տվեց: Նրանով հետաքրքրվեց նաև Թեոդոսիայի քաղաքագլուխ Ալեքսանդր Կազնաչենը⁵, որի միջնորդությամբ 1830-ին 13-ամյա Հովհաննեսն ուսումը շարունակեց Սիմֆերոպոլի ռուսական գիմնազիայում: Շուտով հովանավորները որոշեցին պատանուն ուղարկել Պետերբուրգ՝ Գեղարվեստի կայսերական ակադեմիայում նրան կրթելու համար: Այդ նպատակով Ա. Կազնաչենը Գեղարվեստի ակադեմիայի նախագահ Ալեքսեյ Օլենինին ծանոթացրեց Այվազովսկու գծանկարներին, որոնց առիթ ունեցան ծանոթանալու նաև արքունյաց նախարար, իշխան Պյոտր Վոլկոնսկին, ապա և ինքը՝ Ռուսաստանի կայսր Նիկոլայ Առաջինը: Արդյունքում՝ վերջինիս «բարձրագույն բարեհաճ թույլտվությամբ» 1833 թ. հուլիսի 22-ին 16-ամյա Հովհաննեսը դարձավ Գեղարվեստի ակադեմիայի սան՝ ուսման անցնելով ռուս անվանի գեղանկարիչ, պրոֆեսոր Մաքսիմ Վորոբյովի ղեկավարած բնանկարի դասարանում:

Այվազովսկին, որպես օգնական, առժամանակ աշխատում է Նիկոլայ Առաջինի հրավերով Ֆրանսիայից ժամանած ծովա-

⁵ Կազնաչեն Ալեքսանդր Իվանի (1788-1880) – Թեոդոսիայի քաղաքագլուխ (1827-ից), Տավրիայի նահանգապետ (1829-ից), իսկական գաղտնի խորհրդական (1834-ից), Տավրիայի ազնվականության նահանգային պարագլուխ (1845-ից), Օդեսայի քաղաքագլուխ (1848-ից), սենատոր՝ Ռուսական կայսրության պետական իշխանության և օրենսդրության բարձրագույն մարմնի անդամ (1854-ից): Այվազովսկին Կազնաչենին պատկերող մի քանի դիմանկարներ է ստեղծել: Վերջինիս մահից հետո նկարչի նախագծով և նրա անձնական միջոցներով Թեոդոսիայում նախկին քաղաքապետի հիշատակը հավերժացնող ցայտադրյուր է կառուցվել:

նկարիչ Ֆիլիպ Տանների արվեստանոցում: Սակայն, չհանդուրժելով վերջինիս ամբարտապան բնավորությունը, նա հեռանում է՝ վերադառնալով Մ. Վորոբյովի մոտ, ապա մտնում մարտանկարի դասարան, որի ղեկավարն էր Սանկտ Պետերբուրգում բնակություն հաստատած գերմանացի գեղանկարիչ, պրոֆեսոր Ալեքսանդր Ջաուերվեյդը: Այդ ժամանակ ստեղծված «Ծովափը գիշերով» (1837), «Յալթա» (1838), «Հին Թեոդոսիան» (1839), «Լուսնկա գիշեր Գուրզուֆում» (1839) կտավները վկայում են, որ պատանի նկարիչը ոչ միայն լրջորեն ուսումնասիրել է իր ուսուցիչների՝ Մաքսիմ Վորոբյովի և Ալեքսանդր Ջաուերվեյդի, այլև ռուս ականավոր բանակարիչ, բացօթյա նկարչության գերազանց վարպետ Սիլվեստր Շչեդրինի ստեղծագործությունները⁶:

Սանկտ Պետերբուրգում սովորելու ժամանակ Այվազովսկին նամակագրական կապ է պահպանել իր «հոգեհոր»՝ Ալեքսանդր Կազնաչենի հետ, որի երաշխավորությամբ հաճախել է Պետերբուրգի ազնվականներից շատերի տները, որտեղ հավաքվում էր ժամանակի ռուս մտավորականության ընտրանին: Այդ հավաքների ընթացքում, ներկաների խնդրանքով, Այվազովսկին արևելյան բնորոշ դիրքով՝ երաժշտական գործիքը ձախ ծնկին հենած, ջութակ է նվագել, երբեմն էլ նվագն ուղեկցել երգեցողությամբ: Հավաքներից մեկին մասնակցած ռուս կոմպոզիտոր Միխայիլ Գլինկան իր «Ռուսլան և Լյուդմիլա» նշանավոր օպերայում օգտագործել է Այվազովսկու կատարմամբ հնչած լեզգինկայի մեղեդին ու թաթարական երկու եղանակ⁷: Այվա-

⁶ Պահպանվել են այդ տարիներին Հովհաննես Այվազովսկու ձեռքով կատարված՝ Սիլվեստր Շչեդրինի կտավներն ընդօրինակող, նմանահանող աշխատանքներից մի քանիսը:

⁷ Տե՛ս. **Глинка М.И.** Литературное наследие. Том 1, Москва, 1952, стр. 180.

զովսկին երջանիկ առիթ է ունեցել ծանոթանալու նաև հանճարեղ բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինի ու նրա տիկնոջ՝ գեղեցկուհի Նատալյա Գոնչարովայի հետ: Հանդիպումը կայացել է 1836-ին՝ Սանկտ Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի տարեկան ցուցահանդեսի սրահներում⁸: Դրանից մեկ տարի անց Ա.Ս. Պուշկինի ողբերգական մահվան լուրը խորապես վշտացրել է նկարչին, որն իր ուշ շրջանի ստեղծագործության մեջ հաճախ է անդրադարձել բանաստեղծի կերպարին⁹:

Այվազովսկու ստեղծագործական կյանքում կարևոր նշանակություն ունեցավ նրա հանդիպումը Կարլ Բրյուլլովի հետ: «Պոմպեյի վերջին օրը» (1833) հանրահայտ կտավն արդեն ավարտած՝ դեռ երիտասարդ, բայց արդեն լայն համբավ ձեռք բերած նկարիչը նոր էր վերադարձել Իտալիայից, և Սանկտ Պետերբուրգի Գեղարվեստի կայսերական ակադեմիայի ուսանողներից շատերն էին ձգտում հայտնվել նրա ղեկավարած՝ բնանկարի, դիմանկարի և պատմանկարի միացյալ դասարանում: Հովհաննես Այվազովսկին, ի տարբերություն իր հասակակիցներ և դասընկերներ Աղաթոն Հովնաթանյանի և Մովսես Մելիքովի (Մելիքյանց), չի աշակերտել Բրյուլլովին, բայց հաճախ է շփվել նրա հետ՝ արժանանալով վերջինիս բարձր գնահա-

⁸ Տե՛ս. **Барсамов Н.С.** Айвазовский. Москва, 1962, стр. 21.

⁹ Հովհաննես Այվազովսկու՝ Ա.Ս. Պուշկինի հիշատակին ու նրա կերպարին նվիրված ստեղծագործություններից հայտնի են «Պուշկինը լեռներում: Արևամուտ» (1877), «Պուշկինն Այու-Դադի լեռների մոտ» (1880), «Պուշկինի հրաժեշտը Սև ծովին» (1887, բանաստեղծի կերպարն այս նկարում, Այվազովսկու խնդրանքով, վրձնել է Իլյա Ռեպինը), «Պուշկինը ծովափին» (անթվակիր), «Պուշկինի հրաժեշտը ծովին» (1897), «Պուշկինը և Մարիա Ռաևսկայան ծովափին» (անթվակիր, հայտնի է նաև այդ նույն նկարի հեղինակային կրկնությունը), «Պուշկինն Այ-Պետրիի գագաթին (Արևածագ)» (անթվակիր) և «Պուշկինը Գուրզուֆի լեռների մոտ» (1899) յուզաներկ կտավները:

տականին ու բարեհաճ վերաբերմունքին¹⁰: Բրյուլլովն առաջինը նկատեց, որ Այվազովսկու հետագա ուսումը Գեղարվեստի ակադեմիայում այլևս նրան ոչինչ չի տալու: Այդ իսկ պատճառով նա ակադեմիայի կառավարման խորհրդին դիմեց երիտասարդ նկարչի ուսման ժամկետը երկու տարով կրճատելու և նրան ակադեմիայի հաշվին արտասահման գործուղելու առաջարկով՝ առավել ևս, որ Այվազովսկու «Ֆիննական ծովածոցի անդորրը» (1837) կտավն ակադեմիական հերթական ցուցահանդեսում արժանացել էր առաջին աստիճանի ոսկե մեդալի¹¹, ինչը հեղինակին արտասահմանում կատարելագործվելու իրավունք էր տալիս: Սակայն, հաշվի առնելով վերջինիս պատանի տարիքը, նրան 1838-ին արտասահմանի փոխարեն գործուղեցին Ղրիմ:

Մեկ տարի անց, որպես նկարիչ, Այվազովսկին մասնակցել է Սևծովյան նավատորմի կովկասյան արշավանքներից մեկին: Ռազմանավի վրա նա ծանոթացել է ռուս ապագա ծովակալներ ու փոխ-ծովակալներ Միխայիլ Լազարևի, Պավել Նախիմովի, Վլադիմիր Կոռնիլովի, Ալեքսանդր Պանֆիլովի և Վլադիմիր Իստոմինի հետ, որոնց ընկերակցել է երկար տարիներ:

Վերադառնալով Պետերբուրգ՝ Այվազովսկին արժանացել է 14-րդ դասի նկարչի (այն է՝ «դասային նկարչի») կոչման: Սանկտ Պետերբուրգի կայսերական ակադեմիայում ուսումն

¹⁰ Հենց Բրյուլլովի խորհրդով է ռուս անվանի արձակագիր և բանաստեղծ Նեստոր Կուկոլնիկը երիտասարդ ծովանկարչի մասին դրվատական մի շարք հոդվածներ գետեղել իր խմբագրությամբ Սանկտ Պետերբուրգում 1837-1838 և 1840-1841 թվականներին լույս տեսած «Художественная газета» կիսամյա թերթում:

¹¹ Մինչ այդ՝ 1835-ին, «Ծովեզերքի տեսարան Սանկտ Պետերբուրգի մերձակայքում» էտյուդի համար 18-ամյա Այվազովսկուն շնորհվել էր արծաթե մեդալ, իսկ մեկ տարի անց նա արժանացել էր երկրորդ աստիճանի ոսկե մեդալի:

ավարտած երիտասարդին վերջապես արտոնել են պետության հաշվին վեց տարի ժամկետով մեկնել Եվրոպա:

1840 թ. հուլիսին Այվազովսկին արդեն Իտալիայում էր, որտեղ նա հնարավորություն ստացավ ուսումնասիրելու և ընդօրինակելու իտալացի հին վարպետների աշխատանքները: Բայց ինքն էլ շարունակ աշխատում, ստեղծագործում էր: Հռոմի Գրիգոր XVI պապը տեսնում է նրա նորաստեղծ նկարներից մեկը՝ Գիրք Ծննդոցի տողերով ներշնչված, տիեզերական խավարում կիսաթաղված և աստվածային լույսից գոյացող անկարգ ջրերը գեղարվեստական արտահայտիչ ձևերով պատկերող «Քաոս (Աշխարհի արարումը)» (1841) կտավը, հավանում և այն գնելու ցանկություն հայտնում: Նկարիչը հրաժարվում է առաջարկված գումարից և աշխատանքը պարզապես նվիրում կաթոլիկ եկեղեցու հոգևոր առաջնորդին¹²: Ի պատասխան դրան՝ վերջինս Այվազովսկուն արժանացնում է ոսկե մեդալի: Ասում են, թե Այվազովսկու հետ Վենետիկում ծանոթացած Նիկոլայ Գոգոլը, լսելով այդ պատմությունը, բացականչել է. «Փա՛ռք քեզ, Վանյա, փոքրիկ մարդ, դու Նևայի ափերից եկար Հռոմ և անմիջապես «Քաոս» բարձրացրեցիր Վատիկանում...»¹³:

Վենետիկի Ս. Ղազար կղզում Այվազովսկին հանդիպում է ավագ եղբորը՝ հայ Մխիթարյանների միաբանության անդամ Գաբրիել Այվազովսկուն, որը Թեոդոսիայից Վենետիկ էր մեկնել դեռ 1826-ին և որին Հովհաննեսը վաղուց չէր տեսել: Այստեղ

¹² Հետագայում Հռոմի Լևոն XIII պապը նկարչի վերոհիշյալ աշխատանքն ընծայել է Վենետիկի հայ Մխիթարյանների միաբանությանը, որտեղ էլ այն պահվում է մինչ օրս: 1864-ին Այվազովսկին վրձնել է համանուն մեկ այլ կտավ, որը ներկայումս գտնվում է Սանկտ Պետերբուրգի Ռուսական պետական թանգարանում:

¹³ Տե՛ս. **Кузьмин Н.Н.** Воспоминания о профессоре И.К. Айвазовском, стр. 25.

է ստեղծվում ծովանկարչի «Մխիթարյան հայրերը Ս. Ղազար կղզում: Վենետիկ» (1843) յուղաներկ կտավը:

Իտալիայում Այվազովսկին մտերմանում է ռուս տաղանդավոր գեղանկարիչ Ալեքսանդր Իվանովի հետ, որն այդ տարիներին դեռ շարունակում էր աշխատել «Քրիստոսի հայտնությունը ժողովրդին» (1836-1857) մեծակտավ բազմաֆիգուր ստեղծագործության վրա: Այվազովսկու՝ 1841-ին Հռոմում բացված ցուցահանդեսի մասին հիացմունքով են գրում տեղի թերթերը, իսկ մեկ տարի անց Նեապոլում ու Վենետիկում կայացած ցուցահանդեսները տեսնելու համար մարդիկ ժամերով հերթ են կանգնում¹⁴: Երիտասարդ ծովանկարչին ողջունում և իտալերենով գրված բանաստեղծություն է նվիրում ռոմանտիկ բնանկարի խոշորագույն վարպետներից մեկը՝ Հռոմում բնակվող անգլիացի գեղանկարիչ Ուիլյամ Թյորները¹⁵: Շատերն են այցելում Այվազովսկու արվեստանոց ու նրան պատվերներ տալիս: Այդ ժամանակ են ստեղծվել նրա վաղ շրջանի առավել հիշարժան պատկերները՝ «Նեապոլի ծովածոցը» (1841), «Նեապոլի ծովածոցը լուսնակ գիշերով: Վեզուվ» (1841), «Վենետիկյան ծովալճակի տեսարանը» (1841), «Նեապոլի փարոսը» (1842), «Վենետիկը» (1842) և այլն:

Հռոմում և Վենետիկում են կատարվել ծովանկարչին պատկերող առաջին դիմանկարները, որոնցից մեկը (աթոռին նստած, ժպտացող) ռուս անվանի գեղանկարիչ, Ալեքսեյ Վե-

¹⁴ Տե՛ս. **Սարգսյան Մինաս**, Հովհաննես Այվազովսկի, Երևան, 1967, էջ 8-9:

¹⁵ Թյորների բանաստեղծության իտալերեն բնօրինակը և դրա ռուսերեն ազատ թարգմանությունը տե՛ս. Иван Константинович Айвазовский и его художественная XLII-летняя деятельность (1836-1878) // Русская старина. Ежемесячное историческое издание. Том XXII, Санкт-Петербург, 1878 (девятый год), стр. 431.

նեցիանովի և Կարլ Բրյուլլովի աշակերտ Ալեքսեյ Տիրանովի՝ այժմ Մոսկվայի Տրետյակովյան պետական պատկերասրահում պահվող յուղանկարն է, երկուսը (ցլամարտիկի բնորոշ զգեստով) Այվազովսկու ակադեմիական դասընկեր, շնորհալի գեղանկարիչ, վաղամեռիկ Վասիլի Շտերնբերգի ջրաներկ աշխատանքներն են, իսկ չորրորդը (արևելյան տիրակալի տեսքով ու տարազով, կիսապառկած դիրքով) իտալական մատիտով արված գծանկար է, որի հեղինակը Սանկտ Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, Ռուսաստանում երկար տարիներ աշխատած իտալացի նկարիչ Միխայիլ (Միքելանջելո) Սկոտտին է¹⁶:

Իր եվրոպական «հաղթարշավը» Այվազովսկին 1843-1844 թթ. շարունակում է Ֆրանսիայում, Անգլիայում ու Նիդերլանդներում: Աննախադեպ հաջողություն է ունենում Լուվրի սրահներում նկարչի կազմակերպած ցուցահանդեսը¹⁷, իսկ Գեղեցիկ արվեստների ֆրանսիական ակադեմիան նկարչին ոսկե մեդալ է շնորհում:

Զսպասելով իր վեցամյա գործուղման ավարտին, ժամկետից երկու տարի շուտ՝ 1844-ին, Այվազովսկին վերադառնում է Սանկտ Պետերբուրգ և անմիջապես արժանանում Գեղարվես-

¹⁶ Հետագայում XIX դարի ռուս արվեստագետներից Հովհաննես Այվազովսկու կերպարին են անդրադարձել նկարիչներ Վասիլի Տրոպինինը, Ստեպան Ռիմարենկոն, Դմիտրի Բոլոտովը, Իվան Կրամսկոյը, Կոնստանտին Մակովսկին, Իլյա Ռեպինը, քանդակագործներ Նիկոլայ Ստեպանովը, Ալեքսանդր Բելյանը, Մատվեյ Չիժովը, Լեոպոլդ Բերնշտամը, Իլյա Գինցբուրգը և ուրիշներ:

¹⁷ Ցուցահանդեսի բացմանը ներկա ֆրանսիացի գեղանկարիչ ու դիվանագետ, օրիենտալիզմի՝ արևելապաշտ արվեստի ներկայացուցիչ Օրաս Վերնեն, դիմելով Այվազովսկուն, ասել է. «Ձեր արվեստով Դուք փառավորում եք Ձեր հայրենիքը» (տե՛ս. **Барсамов Н.С.** Айвазовский, стр. 42):

տի կայսերական ակադեմիայի իսկական անդամի կոչմանը¹⁸: Նույն թվականին նա նշանակվում է Ռուսաստանի Գլխավոր ծովային շտաբի նկարիչ՝ Ծովային նախարարության համազգեստ կրելու իրավունքով: Նրա կտավներից շատերը, մասնավորապես՝ Բալթիկ ծովի ռուսական ռազմական նավակայանների տեսարանները, այսուհետ սկսում են զարդարել ոչ միայն բարձրաստիճան ազնվականների տները, այլև կայսերական պալատներն ու նստավայրերը:

1845-ի գարնանն Այվազովսկին ռուս անվանի ծովագնաց և աշխարհագրագետ, ապագա ծովակալ և Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահ Ֆեոդոր Լիտկեի ղեկավարած արշավախմբի հետ ուղևորվում է դեպի Փոքր Ասիայի ափերն ու Հունաստանի կղզեխումբը և առաջին անգամ լինում Կոստանդնուպոլսում: Այնուհետև նա մեկնում է Ղրիմ, հողամաս գնում Թեոդոսիայի ծովափին և սեփական նախագծով կառուցում ընդարձակ արվեստանոց ու բնակելի հարմարավետ տուն, որն էլ հետայսու դառնում է նրա մշտական, ապահով կացարանը:

Մեկ տարի անց՝ 1846-ին, Այվազովսկին մեկնում է Պետերբուրգ՝ մի քանի տարի ակտիվորեն մասնակցելով Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում, ապա Մոսկվայում պարբերաբար՝ կես տարին մեկ գումարվող ցուցահանդեսներին¹⁹: Այստեղ է

¹⁸ 1847-ին նույն ակադեմիան նկարչին շնորհել է նաև պրոֆեսորի կոչում, իսկ ավելի ուշ՝ 1887-ին, նա ընտրվել է ակադեմիայի պատվավոր անդամ:

¹⁹ Այդ տարիներին, ինչպես և հետագայում, նկարիչը մասնակցել է նաև Թեոդոսիայում և Ռուսաստանի գավառային քաղաքներում ու նահանգային կենտրոններում՝ Կիևում, Խարկովում, Օդեսայում, Սիմֆերոպոլում, Խերսոնում, Նիկոլանում, Ռիգայում և այլուր կազմակերպված ցուցահանդեսներին:

ստեղծվել նկարչի, թերևս, ամենահայտնի աշխատանքներից մեկը՝ «Իններորդ ալիք» (1850) ծովանկարը:

1848-ին Այվազովսկին ամուսնացել է և հայկական եկեղեցում պսակադրվել Ռուսաստանում ծառայության անցած անգլիացի պալատական բժշկի դուստր, տնային դաստիարակչուհի Յուլիա Գրևսի հետ ու չորս տարի անց՝ 1852-ին, վերջնականապես հաստատվել Թեոդոսիայում: Այդ տարիներին և հետագայում նա հնագիտական պեղումներ է կատարել քաղաքի մերձակա բլուրներում ու դամբանաթմբերում, ծովափնյա իր առանձնատանը և արվեստանոցին կից բացել մշտապես գործող պատկերասրահ, սեփական նախագծերով, երբեմն էլ անձնական միջոցներով կառուցել Թեոդոսիայի Հնությունների թանգարանի շենքը և ճարտարապետական այլ շինություններ, նպաստել տեղի ջրմուղի, նավակայանի ու երկաթուղու շինարարությանը և նորոգմանը:

1857-ին նկարիչն ուղևորվել է Փարիզ, ունեցել անհատական նոր ցուցահանդես և ծանոթացել մի շարք անվանի մարդկանց, այդ թվում՝ Փարիզում բնակվող իտալացի կոմպոզիտոր Ջոակինո Ռոսսինիի հետ:

Թեև 1853-ին Սանկտ Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիան մերժել էր Այվազովսկու՝ սեփական արվեստանոցին առընթեր նկարչական դպրոց բացելու առաջարկը, սակայն հետագայում՝ 1865-ին, նրան ի վերջո հաջողվել է հասնել իր նպատակին: «Համընդհանուր աշխատանոց» կոչված այդ կրթարանում, առավելապես ամռան ամիսներին, սովորել ու ստեղծագործական փորձ են ձեռք բերել ոչ միայն Ղրիմում ծնված, այնտեղ բնակվող սկսնակ և ուսյալ արվեստագետները (ինչպես, օրինակ, Ադոլֆ Ֆեսլերը, Էմմանուել Մահտեսյանը կամ Կոնս-

տանտին Բոգաևսկին), այլև Ռուսաստանի տարբեր ծայրերից ու արտասահմանից Թեոդոսիա եկած նկարիչները, որոնցից էր Այվազովսկու հետևորդ, իտալացի շնորհալի վարպետ Գաբրիելո Բարտոլոմեո Կասեսսին:

1866-ին քմահաճ բնավորություն և առողջական լուրջ խնդիրներ ունեցող Յուլիա Գրևսն այլևս հրաժարվում է Թեոդոսիայում մնալուց և մեկնում է Օդեսա. խաթարվում է չորս դուստրերի՝ Ելենայի, Մարիայի, Ալեքսանդրայի և Ժաննայի հոգատար ծնող Հովհաննես Այվազովսկու ընտանեկան անդորրը²⁰:

1868-ին նկարիչն ուղևորվում է Կովկաս: Թիֆլիսում նա ցուցահանդես է ունենում²¹ և իր նկարներից երկուսը նվիրաբերում քաղաքում գործող Կովկասյան թանգարանին: Նույն ցուցահանդեսում նա ներկայացրել է կենցաղային տարրերով համեմված «Թիֆլիսի տեսարանը»²², ինչպես նաև «Արարատ» ու «Սևան» կտավները²³:

²⁰ Գիտակցելով, որ այլևս հնարավոր չէ վերականգնել ընտանեկան համերաշխ մթնոլորտը՝ Յուլիա Գրևսի հետ իր ամուսնությունը լուծարելու խնդրանքով Այվազովսկին նամակներ է հղում Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցուն (Քերեստեճյան): Երկար քաջբշուկից հետո Էջմիածնի Սինոդի կարգադրությամբ 1877 թ. մայիսի 30-ին նկարչի խնդրանքը, վերջապես, բավարարվում է:

²¹ Սա Թիֆլիսում երբևէ բացված նկարչական առաջին ցուցահանդեսն էր: Դրան վերաբերող մանրամասները տե՛ս. **Սարգսյան Մինաս**, Մեծ ծովանկարչի կյանքը, Երևան, 1990, էջ 219-227:

²² Մեկ տարի հետո՝ 1869-ին, Այվազովսկին վրձնել է նույն վերնագրով, բայց այլ դիտակետից քաղաքը պատկերող ևս մի կտավ, որն այժմ պատկանում է Ստավրոպոլի Կերպարվեստի երկրամասային թանգարանին:

²³ Այվազովսկուն բախտ չվիճակվեց Հայաստան գալ: Նշված պատկերները նա կատարել է լուսանկարների օգնությամբ: Փաստական ոչ մի հիմք չունի գեղանկարիչ և արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանի այն պնդումը, թե Այվազովսկին «Հայաստանի հողի վրա է նկարել Արարատի տեսարանները» (տե՛ս.

1869-ին Այվազովսկին իր հերթական ցուցահանդեսն է բացում Սանկտ Պետերբուրգում, իսկ մեկ տարի անց արժանանում լիիրավ պետական խորհրդականի տիտղոսի, որը հավասարազոր էր ծովակալի բարձր կոչմանը:

Հաջողությամբ է պսակվում 1874-ին Ֆլորենցիայում նկարչի ցուցահանդեսը. Այվազովսկին ընտրվում է տեղի Գեղարվեստի ակադեմիայի պատվավոր անդամ, նրա անձնանկարներից մեկը ձեռք է բերում Ֆլորենցիայի նշանավոր Պիտտի պատկերասրահը²⁴, իսկ մյուսը՝ Հռոմի կերպարվեստի թանգարանը²⁵:

Նույն թվականին Աբդուլ Ազիզի հրավերով նկարիչը մեկնում է Կոստանդնուպոլիս և սուլթանի համար միանգամից 25 կտավ վրձնում: Այդ աշխատանքներով հիացած միապետը նրան շնորհում է «Օսմանիե» երկրորդ աստիճանի շքանշան:

1878-ին, մեկը մյուսի հետևից, Այվազովսկին ցուցահանդեսներ է բացում Մայնի Ֆրանկֆուրտում, Շտուտգարտում, Ամստերդամում, Ֆլորենցիայում, Ջենովայում, ապա՝ Փարիզում և Մյունխենում:

1880 թ. հուլիսի 14-ին Թեոդոսիայի քաղաքային Դուման, հարգելով Այվազովսկու՝ քաղաքին մատուցած բացառիկ ծառայությունները, միաձայն նրան Թեոդոսիայի պատվավոր քաղաքացու կոչում է շնորհում, նրա անունով անվանում քաղաքամերձ

Շիշմանյան Ռաֆայել, Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 50): Արարատ լեռան պատկերին Այվազովսկին անդրադարձել է նաև «Արարատի հովիտը» (1882, նկարի ստորին ծախ անկյունում հեղինակը դրել է *Այվազեան* հայատառ ստորագրությունը), «Արարատ լեռը» (1885), «Արարատը կեսօրին» (1887), «Նոյն իջնում է Արարատից» (1889) յուրաներկ աշխատանքներում:

²⁴ Ներկայումս ծովանկարչի այդ անձնանկարը ցուցադրվում է Ֆլորենցիայի մեկ այլ, ոչ պակաս հայտնի Ուֆֆիցի պատկերասրահում:

²⁵ Տե՛ս. **Кузьмин Н.Н.** Воспоминания о профессоре И.К. Айвазовском, стр. 54.

բլուրներից և քաղաքի փողոցներից մեկը, իսկ առափնյա դատարկ հողամասի երկայնքով նկարչի անվան ծառուղի գցում²⁶:

Երկու տարի անց 65-ամյա արվեստագետն ամուսնանում է Թեոդոսիայի հայ վաճառականներից մեկի երիտասարդ այրու՝ 25-ամյա Աննա Բուռնազյանի հետ՝ նրա կերպարը հավերժացնելով իր կտավներում²⁷:

1887-ի ամռանը նկարիչը Ստոկհոլմում բացում է շուրջ 20 կտավներ ընդգրկող ցուցահանդես, որը լայնորեն լուսաբանվում է շվեդական մամուլում²⁸: Նույն թվականի սեպտեմբերի 26-ին Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի նիստերի դահլիճում մեծ հանդիսավորությամբ նշվում են Հովհաննես Այվազովսկու ծննդյան 70-ամյա և ստեղծագործական գործունեության 50-ամյա հոբելյանները: Ծովանկարչին ողջունելու ու նրան հարգանք մատուցելու էր եկել Սանկտ Պետերբուրգի բարձրախավ ողջ հասարակությունը: Աշխարհահռչակ ծովանկարչին նվիրված հանդիսությանը հանգամանորեն անդրադարձել է Պետերբուրգում Սիմեոն Գուլամիրյանի հրատարակած «Արաքս» ամսա-

²⁶ Տե՛ս. Айвазовский. Документы и материалы, стр. 180-181.

²⁷ Թեոդոսիայի Հովհաննես Այվազովսկու անունը կրող պատկերասրահում են գտնվում նկարչի վրձնած, Աննա Բուռնազյանին պատկերող յուղաներկ դիմանկարներից երկուսը, որոնցից մեկը՝ օվալաձևը, ստեղծվել է 1881-ին, նրանց ամուսնությունից մեկ տարի առաջ, իսկ հաջորդը, առավել հայտնին՝ թափանցիկ գլխաքողով դիմանկարը, կատարվել է 1882-ին, երբ նրանք արդեն ամուսիններ էին և շրջագայում էին Հունաստանում: Այդ աշխատանքները պորտրետային ժանրում Այվազովսկու կերտած առավել հաջող ստեղծագործություններից են:

²⁸ Վերոհիշյալ ցուցահանդեսին և Ստոկհոլմում նկարչի ու նրան ուղեկցող Աննա Բուռնազյանի ունեցած հանդիպումներին վերաբերող հանգամանքները տե՛ս. **Գրիգորյան Վարդան**, Հովհաննես Այվազովսկին Ստոկհոլմում (Ըստ Նորայր Բյուզանդացու նամակների) // Սովետական արվեստ, Երևան, 1964, № 12, էջ 46-50:

գիրը²⁹: Անանուն հողվածագիրը, թվարկելով Պետերբուրգի հայ ծխականներին ներկայացնող, հայերեն և ռուսերեն լեզուներով իրենց ուղերձը կարդացած, ապա Այվազովսկուն նվերներ («մի ընտիր մուշտաբել՝ նկարչի ձեռնափայտ... և արծաթյա գեղեցիկ ներկապնակ, որի վրա նկարված էին... Արարատ լեռը և Պետերբուրգի հայոց եկեղեցին») հանձնած պատվիրակներին, տալիս է նաև Իլյա Ռեպինի ընկերներից մեկի՝ Սանկտ Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում ուսանած նկարիչ և ճարտարապետ Քրիստափոր (Խաչատուր) Հուսիկյանցի անունը³⁰: Շուտով վերջինս ստեղծում է Հովհաննես Այվազովսկու վիմատիպ դիմանկարը՝ օգտվելով ծովանկարչի 1888 թվականի հայտնի լուսանկարից³¹: Հուսիկյանցի այդ վիմագրությունն արտատպում է Թիֆլիսում հրատարակվող «Արծազանք» գրական և քաղաքական պատկերազարդ շաբաթաթերթը³²:

1890-ին՝ Փարիզից տուն վերադառնալու ճանապարհին, Այվազովսկին կանգ է առնում Կոստանդնուպոլսում, որտեղ Աբդուլ Համիդը նրան պարգևատրում է «Մեջիդիե» առաջին աստիճանի շքանշանով³³:

1892-ի աշնանը նկարիչն ուղևորվում է ԱՄՆ՝ Նյու Յորքի,

²⁹ Տե՛ս. **Ս.Յ.**, Համբավավոր հայագգի նկարիչ Հովհաննես Այվազովսկի // «Արաքս», Սանկտ Պետերբուրգ, 1888, գիրք Բ, մայիս, էջ 98-105:

³⁰ Նույն տեղում, էջ 104:

³¹ Տե՛ս. **Աղասյան Արարատ**, Մոռացված անուն. նկարիչ և ճարտարապետ Քրիստափոր (Խաչատուր) Հուսիկյանց (1840-1910) // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2014, № 1, էջ 286:

³² Տե՛ս. «Արծազանք», Թիֆլիս, 10 մարտի 1891, № 1, էջ 9:

³³ Տարածված կարծիք կա առ այն, թե իբր Օսմանյան կայսրության մեջ 1894-1896 թթ. տեղի ունեցած հայերի զանգվածային ջարդերի ժամանակ Այվազովսկին ծովն է նետել թուրք սուլթաններից ստացած իր շքանշաններն ու մեդալները:

Վաշինգտոնի, Սան-Ֆրանցիսկոյի ցուցասրահներում, ինչպես նաև Չիկագոյում 1893-ին կայացած Համաշխարհային ցուցահանդեսի տաղավարներից մեկում ներկայացնելով իր կտավները³⁴: Ամերիկայում նրա կատարած աշխատանքներից առավել հայտնի է «Նիագարայի ջրվեժը» (1893): Նկարչի մահից երկու տարի առաջ՝ 1898-ին է ստեղծվել նրա վերջին գլուխգործոցը՝ «Ալիքների մեջ» յուղանկարը:

Այվագովսկին թողել է նկարչական վիթխարի ժառանգություն՝ շուրջ 6000 երփնագեղ կտավ³⁵, որոնց ճնշող մեծամասնությունը ծովային խաղաղ կամ փոթորկված, վաղորդյան մշուշապատ, ցերեկային արևաշող կամ գիշերային լուսնկա տեսարաններ են: Նկարիչը ծովը պատկերել է տարվա տարբեր եղանակներին, տարբեր վիճակներում: Սակայն հատկապես մեծ ներշնչանքով է նա ներկայացրել ալեկոծ ծովի խռով կերպարը և ալիքների մեջ սուզվող, խորտակվող, բայց կույր տարերքին մի կերպ դիմադրող, ուժասպառ մարդկանց մաքառումները («Իններորդ ալիք», 1850, «Նավաբեկություն Աթոս լեռան մոտ», 1856, «Փոթորիկ օվկիանոսում», 1864, «Ծանծաղուտ ընկած նավը», 1872, «Նավաբեկություն», 1876, «Լուսնկա գիշեր: Հրդեհված նավի կործանումը», 1883, «Ալիք», 1889, ««Մարիա» նավը փոթորկված ծովում», 1892 և այլն): Նկարիչը հաճախ է պատկերել

³⁴ Չիկագոյի Համաշխարհային ցուցահանդեսի կազմակերպիչների խնդրանքով նկարիչը նրանց շուրջ երկու տասնյակ աշխատանքներ է ուղարկել, բայց անձամբ ներկա չի եղել գեղարվեստական այդ հեղինակավոր ստուգատեսին:

³⁵ Դրանցից բացի, Այվագովսկին նաև գրաֆիկական տարբեր նյութերով ու տեխնիկաներով (ջրաներկ, դարչնաներկ, մրաներկ, մելան, գունավոր ու սև մատիտներ, ածուխ) հասարակ և կավճապատ, ճերմակ ու երանգավոր թղթերի վրա ստեղծել է անթիվ-անհամար գծապատկերներ, որոնցից շատերն ունեն ոչ թե օժանդակ նշանակություն, այլ գեղարվեստական ինքնուրույն արժեք:

նաև ռուսական նավատորմի հաղթանակները փառաբանող՝ ոչ միայն գեղարվեստական, այլև պատմական ու վավերագրական արժեք ունեցող, ճշմարտանման տեսարաններ:

Այվազովսկին հմուտ արվեստագետ էր և հեշտությամբ էր հաղթահարում աշխատանքի ընթացքում առաջացող տեխնիկական բարդությունները: Սովորաբար նա աշխատում էր արվեստանոցում՝ ամբողջությամբ վստահելով իր տեսողական սուր հիշողությանը և գեղարվեստական վառ երևակայությանը: Աշխատում էր առանց «սրբագրումների» ու նույնիսկ իր մեծադիր կտավներից շատերն ավարտում մի քանի ժամում՝ պահպանելով բնությունից ստացած առաջին տպավորության թարմությունը: Թեև Այվազովսկու ստեղծագործական մեթոդի հիմքում ընկած են դասականության և ակադեմիզմի ավանդական սկզբունքները, այնուամենայնիվ, մարդկային կենդանի հույզերով լեցուն նրա լավագույն կտավները, ըստ էության, ռոմանտիկական մտածողության դրսևորումներ են:

Այվազովսկին գունային նուրբ ընկալումների տեր արվեստագետ էր: Նրա առավել հաջողված կտավները, կոմպոզիցիոն պարզ կառուցվածքի հետ մեկտեղ, աչքի են ընկնում տարածական՝ լուսաօդային, լուսաստվերային և լուսագունային սերտ միասնությամբ, բազմերանգությամբ, տոնային աստիճանավոր մեղմ անցումներով:

Թեև առաջին հայացքից Այվազովսկու արվեստն արմատական կտրուկ տեղաշարժերի չի ենթարկվել, սակայն անցել է ձևավորման, հասունացման ու ծաղկման հերթափուլերով, կրել գաղափարական-կերպարային և ոճական որոշակի փոփոխություններ, ապրել վերելքի ու անկման պահեր:

1840-1850-ական թվականներին նկարչի ստեղծած առան-

ծին կտավներում նկատելի է Կարլ Բրյուլլովի ռոմանտիկական արվեստի ազդեցությունը: Այվազովսկու կենսագիր, արվեստաբան Նիկոլայ Բարսամովը չի բացառում, որ իմպրովիզացիոն՝ հանպատրաստից, առանց փորձնական նախանկարի, ազատ ու արագ աշխատելու եղանակը վերջինիս հուշել է հենց Կ. Բրյուլլովը³⁶:

Ռուսական նկարչության մեջ Այվազովսկին ռոմանտիզմի վերջին ակնառու ներկայացուցիչն էր: Ռոմանտիկական հուզականությամբ, հերոսական ոգով ու շնչով են տոգորված այդ տարիներին նրա վրձնած, հատկապես՝ Ղրիմի պատերազմի ժամանակ ռուսական և թուրքական ռազմանավերի միջև տեղի ունեցած ծովամարտերի տեսարանները («Նավարինի ծովամարտը», 1846, «Չեսմենի ծովամարտը», 1848, «Սինոպի ծովամարտը գիշերով», 1853, «Ծովամարտ», 1855, «Սևաստոպոլի պաշարումը», 1859 և այլն):

Ռոմանտիզմի բնորոշ գծերն է՛լ ավելի շեշտվել, բացահայտվել են նույն շրջանում նկարչի կերտած առավել հայտնի գործերից մեկում՝ «Իններորդ ալիք» (1850) խոշոր կտավում: Մեր առջև փոթորկոտ, մրկածուփ գիշերից հետո վերջապես բացված վաղորդյան տեսարան է: Նորածագ արևի առաջին ճառագայթները լուսավորում են մոլեգնած ծովը և վրա հասնող, ջարդուխուրդ եղած նավակայմերից կախ ընկած, կառչած հոգնատանջ մարդկանց կույ տալու պատրաստ ահեղ ալիքը: Չնայած նկարի դրամատիկ բովանդակությանը, այն թափանցված է օդով ու լույսով, արևի ջերմաբեր շողերով, ինչը պատկերին հուսավետ երանգ, լավատեսական բնույթ է տալիս:

³⁶ Տե՛ս. **Барсамов Н.С.** Айвазовский, стр. 113.

Այվազովսկու ստեղծագործական կյանքը ծաղկում է ապրել 1860-1870-ական թվականներին, երբ նա ստեղծել է բանաստեղծական խոր ներշնչանքով կատարված բազմաթիվ գործեր՝ «Ծովի տեսարան լեռներից» (1864), «Փոթորիկ ծովում» (1865), «Ծովի տեսարան առագաստանավով» (1870), «Փոթորիկ Այա հրվանդանի մոտ» (1875) կտավները: «Փոթորիկ Եվպատորիայի ափերի մոտ» (1861) նկարի մասին ռուս մեծ վիպասան Ֆեոդոր Դոստոևսկին ասել է. «Այվազովսկու փոթորիկը նույնպես ապշելու չափ լավն է, ինչպես և նրա բոլոր փոթորիկները, և այստեղ նա մրցակից չունեցող վարպետ է... Նրա փոթորկի մեջ հափշտակություն կա, կա հավիտենական այն գեղեցկությունը, որը հիացում է իսկական փոթորկի մեջ: Այվազովսկու տաղանդի այդ հատկությունը չի կարելի միակողմանի անվանել, թեկուզ հենց այն պատճառով, որ փոթորիկն ինքնին անսահմանորեն զանազանակերպ է»³⁷:

1873-ին է ստեղծվել ծովանկարչի լավագույն աշխատանքներից մեկը՝ «Ծիածան» կտավը, որտեղ պատկերված է փոթորկված ծովի առափնյա ժայռերի տակ խորտակվող մի նավ: Այվազովսկու ընտրած ցածր դիտակետն այնպիսի տպավորություն է թողնում, կարծես թե մենք էլ գտնվում ենք մոլեգնած ալիքների մեջ, որոնց փրփրադեզ կատարների ջրափոշին քշում է կատաղի քամին: Մշուշոտ պտտահողմի մեջ հազիվ է նշմարվում կործանվող նավը: Ճեղքելով ամպերն ու ծիածանվելով, ներքև է իջնում արևի շողը՝ բազմերանգ անասելի գունագեղություն տալով ողջ տեսարանին: Կտավը լուծված է երկնագույն, դեղին,

³⁷ Նույն տեղում, էջ 95:

վարդագույն, կանաչ նրբերանգներով, որոնց թույրերը բազմա-
պատկվում են ծիածանի մեղմ և օդերևույթ ճաճանչներում:

Այվազովսկու ծովանկարներում մեծ տեղ է հատկացվում
նաև երկնքին: Օդի հոսանքը, քամու շարժումը, փոթորկի պա-
հին ամպերի վազքը, նրանց փոփոխվող, կարծես գալարվող
ուրվագները՝ այդ ամենը խտացնում է Այվազովսկու ծովային
տեսարանների հուզական մթնոլորտը:

Անկրկնելի են նկարչի գիշերային պատկերները («Նեա-
պոլի ծովածոցը լուսնակ գիշերով», 1842, «Գիշերը Վենետի-
կում», 1847, «Փոթորկված ծովը գիշերով», 1849, «Վեզուվի տե-
սարանը լուսնակ գիշերով», 1857, «Գիշեր: Կոստանդնուպոլիս»,
1862, «Օդեսայի տեսարանը գիշերով», 1865, «Լուսնակ գիշեր
Սև ծովի վրա», 1873, «Թեոդոսիան գիշերով: Առափնյա տեսա-
րան», 1881, «Լուսնով լուսավորված ծովը», 1892 և այլն), որոնք
նրա ստեղծագործական ժառանգության առավել գրավիչ նմուշ-
ներից են: Գիշերային լուսավորության կախարդական, ռոման-
տիզմին հատուկ խորախորհուրդ էֆեկտները, թափանցիկ ամ-
պերով շրջապատված լուսնի ցուլքերը ջրի հայելու կամ ալիքների
մեջ նկարչին հաջողվում էր վերարտադրել գրեթե պատրան-
քային, խաբեական ճշտությամբ:

Տարիների ընթացքում, աստիճանաբար, Այվազովսկու ար-
վեստում ի հայտ են գալիս նաև իրապաշտական բնորոշ գծեր,
նրա լավագույն կտավներն ստանում են մոնումենտալ թափ,
առնական շունչ և հնչողություն, խորանում է նկարչի ստեղծա-
գործության գաղափարական բովանդակությունը: Դա վերաբե-
րում է հատկապես 1870-1880-ական թվականներին կատարված
աշխատանքներին, որոնցում նկատելի է ռուս պերեդվիժնիկ-
ների ազդեցությունը:

Այդ տեսակետից առավել հատկանշական է 1881-ին նկարչի կերտած «Սև ծով» կտավը, որտեղ հորիզոնի գիծը երկու հավասար մասի է կիսում ողջ տեսարանը՝ իրարից տարանջատելով ծովն ու երկինքը: Ամպամած մռայլ և քամոտ օր է, կարծես լսվում են ծովի խուլ հառաչն ու հոգոցները: Պատկերի խորքում, հորիզոնի մոտ գոյացող ալիքները համաչափ ռիթմով առաջ են շարժվում՝ մոնումենտալ շունչ հաղորդելով բնանկարին, որտեղ իշխում են մոխրագույն, կապույտ ու կանաչավուն գույս երանգները: Այվազովսկին հրաժարվել է արտաքին շլացուցիչ էֆեկտներից և ալեկոծ ծովի խռով կերպարն ընդհանրացրել գեղարվեստական սուղ միջոցներով: Պատահական չէ, որ պերեդվիժնիկների ներկայացուցիչ, ռեալիստական արվեստի ջատագով Իվան Կրամսկոյը, ով քանիցս քննադատել է ծովանկարչի աշխատանքները, այս անգամ փոխել է սեփական կարծիքն ու «Սև ծով» կտավը բնութագրել որպես նկարչության մեջ երբևէ ստեղծված «առավել վեհաշունչ և պատկառազորու գործերից մեկը»³⁸:

Այվազովսկու արվեստին հաճախ է անդրադարձել նաև երաժշտության ու կերպարվեստի քննադատ, ռուս կոմպոզիտորների «Հզոր խմբակ» ընկերակցության և պերեդվիժնիկների միավորման գաղափարախոս Վլադիմիր Ստասովը: Ծովանկարչի ստեղծագործության մասին նա ևս նախկինում բացասական կարծիքներ էր հայտնել՝ կտրականապես մերժելով նրա որդեգրած իմպրովիզացիոն՝ կտավի վրա չափազանց արագ ու հանպատրաստից աշխատելու եղանակը, որը համարում էր «արատավոր և անթույլատրելի»: Այդ առիթով նա գրել է. «Բնանկա-

³⁸ St'а. Иван Николаевич Крамской. Его жизнь, переписка и художественно-критические статьи (1837-1887). Санкт-Петербург, 1888, стр. 515.

րիչների շարքում ինձ հատկապես տխրեցրեց Այվազովսկին... Իր շուրջ ուսանողների մի խումբ հավաքած՝ նա երկու ժամում մի կտավ վրձնեց ու հետո այն կախեց ցուցահանդեսում: Եվ դա շատ վատ է: Ով երկու ժամում նկար է ստեղծում, թող իր մեջ պահի այդ չարաբաստիկ գաղտնիքը, այլ ոչ թե այն քողազերծի և ի ցույց դնի, առավել ևս երիտասարդ ուսանողների առջև, որոնց նա այդպիսով թեթևամտության և անլրջության դասեր է տալիս ու նրանց մեքենայական սովորություններ փոխանցում...»³⁹: Բայց հետագայում Ստասովը նույնպես վերանայել է Այվազովսկու մասին իր կարծիքը՝ նրան բնութագրելով որպես ծովանկարչության մեջ բացառիկ վարպետ⁴⁰:

Կյանքի վերջին շրջանում՝ 1890-ական թվականներին կատարված առանձին աշխատանքներում Այվազովսկին կտավին է հանձնել ծովային տարերքի առավել համապարփակ՝ սինթետիկ կերպարը: Դրանցից են մոնումենտալ լայնաշունչ թափով ու գեղարվեստական արտակարգ ուժով օժտված «Ժայռի փլուզում» (1883), «Ալիք» (1889) և «Փոթորիկ Ազովի ծովում» (1895) մեծադիր պատկերները: Սակայն Այվազովսկու այդ տարիների ստեղծագործության գագաթնակետն է նույնքան վիթխարի չափեր ունեցող, թեև շատ արագ՝ տասն օրում արված «Ալիքների մեջ» (1898) ծովանկարը, որն իր կոմպոզիցիոն պարզ կառուցվածքով հիշեցնում է մեզ արդեն ծանոթ «Սև ծով» (1881) կտավը: Բայց եթե վերջին ստեղծագործության մեջ հորիզոնի գիծն անցնում է կտավի ուղիղ մեջտեղով, ապա «Ալիքների մեջ» ծովա-

³⁹ Տե՛ս. **Стасов В.В.** Избранные сочинения. В двух томах. Т. 1, Москва-Ленинград, 1937, стр. 227.

⁴⁰ Տե՛ս. **Стасов В.В.** Избранные сочинения. В трех томах. Т. 3, Москва, 1952, стр. 669.

նկարում լաջվարդ, երկնագույն, մանուշակագույն, կանաչին տվող սառը գույներով պատկերված ծովն ավելի լայնարձակ, լայնածավալ է, մինչդեռ թխպամած ու սև ամպերով պատված երկինքը տեղ է գրավել կտավի վերին, համեմատաբար նեղ շերտի վրա: Բնության ահեղ տեսարանը լուսավորում, կենդանացնում ու ինչ-որ չափով ջերմացնում է ձախից վայր իջնող արևի աղոտ, թույլ ճառագայթը: Նշենք, որ սկզբում Այվազովսկին կտավի կենտրոնում պատկերել էր մարդկանցով բեռնված մի փոքր մակույկ, բայց շուտով հրաժարվեց դրանից՝ գիտակցելով, որ այդպիսով նեղացնում է գեղարվեստական մտահղացման սահմանները և նսեմացնում նկարում արտահայտված բնապաշտական գերակա գաղափարը⁴¹:

Թեև ծերունագարդ արվեստագետը դեռ շարունակեց աշխատել և կերտեց հիշարժան ևս մի քանի պատկերներ («Լուսնաժամ», 1899, «Յալթա», 1899, «Ծովածոց», 1900 և այլն), սակայն այդ կտավներից ոչ մեկն այլևս չէր կարող մրցել «Ալիքների մեջ» կոթողային ստեղծագործության հետ:

Ապրելով Ռուսաստանում, սովորելով ռուս անվանի նկարիչների մոտ, շփվելով ռուսական մշակույթի ականավոր ներկայացուցիչների հետ, Այվազովսկին դարձավ ռուսական արվեստի խոշորագույն դեմքերից մեկը՝ որոշակի ազդեցություն թողնելով ռուս նկարիչներ Ալեքսեյ Բոգոլյուբովի, Լև Լազորիոյի, Արխիպ Կուինջիի, Ռուֆին Սուդկովսկու, Միխայիլ Ալխոմի, Միխայիլ Լատորիի, Ալեքսեյ Գանգենի և այլոց վրա⁴²:

⁴¹ Տե՛ս. **Барсамов Н.С.** Айвазовский, стр. 139.

⁴² Միխայիլ Լատորին (1875-1942) և Ալեքսեյ Գանգենը (1876-1937) Հովհաննես Այվազովսկու թոռներն էին, նրա ավագ դուստրերի՝ Ելենայի և Մարիայի զավակները:

Սերտ էին Հովհաննես Այվազովսկու կապերը նաև հայ ժողովրդի, հայկական հասարակական ու պատմամշակութային իրականության հետ⁴³: Նա քանիցս եղել է Կոստանդնուպոլսում ու Զմյուռնիայում, տեղի հայկական համայնքների կողմից արժանացել ջերմ ընդունելության⁴⁴, իսկ 1868-ին այցելել Թիֆլիս:

Այվազովսկու հայրենասիրական զգացումները բազմաթիվ դրսևորումներ են գտել: Նա Վենետիկի Մխիթարյան միաբանությանն է նվիրել «Փարոսը Նեապոլում» (1842) յուղանկարը, Բուրսայի հայկական նորաշեն եկեղեցու ավագ սեղանի համար կատարել Ս. Գևորգի սրբապատկերը, նյութապես աջակցել միջնադարյան հայ պատմիչների երկերի հրատարակությանը, իսկ կյանքի վերջում վրձնել հայ ժողովրդի պատմությանը վերաբերող կտավներ, որոնցից են «Գրիգոր Լուսավորիչը» (1892), «Երդումը (Զորավար Վարդան Մամիկոնյան)» (1892), «Հայ ժողովրդի մկրտությունը» (1892), «Բայրոնի այցը Մխիթարյանների Ս. Ղազար կղզում» (1899) և այլն: Անձնանկարներից ու հարազատ մարդկանց դիմանկարներից զատ, Այվազովսկին անդրադարձել է նաև հայազգի երևելի գործիչներից ու նրանց ժառանգներից մի քանիսի՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի հոգաբարձու, պետական խորհրդական Խաչատուր Լազարյանի կրտսեր որդու, մանուկ հասակում կյանքից հեռացած Հովհաննես Լա-

⁴³ Այդ կապերին հատուկ նվիրված, դրանք հանգամանորեն ներկայացնող ու լուսաբանող հոդվածներ են գրել արվեստաբան Մինաս Սարգսյանը (տե՛ս. **Սարգսյան Մ.Ս.**, Հովհաննես Այվազովսկին և հայ մշակույթը // Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1963, № 4, էջ 25-38) և պատմաբան Վարդգես Միքայելյանը (տե՛ս. **Микаелян В.А.** И.К. Айвазовский и его соотечественники // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1991, № 1, էջ 59-70):

⁴⁴ Տե՛ս, օրինակ. **Թովչյան Ստեփան**, Նկարչի և բանաստեղծի Սև ծովը // Սովետական արվեստ, Երևան, 1982, № 9, էջ 53-58:

զարյանի, Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Հարություն Խալիբյանի, Ռուսական կայսրության ներքին գործերի նախարար Միքայել Լորիս-Մելիքովի, Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի, Ղրիմի Սուրբ Խաչ վանքի վանահայր, եպիսկոպոս Խորեն Ստեփաննի և այլոց կերպարներին:

Հովհաննես Այվազովսկին մեծապես նպաստել է ազգային նոր կերպարվեստի ձևավորմանը և որոշակի ազդեցություն թողել հայկական ծովանկարչության ու բնանկարի զարգացման վրա: Նրա հետ շփվել, նրա մոտ ուսանել, նրա խոսքով ու խրատներով են ոգեշնչվել արևելահայ և արևմտահայ ծովանկարիչներ Մկրտիչ Ճիվանյանը, Էմմանուել Մահտեսյանը, Արսեն Շապանյանը, Վարդան Մախոխյանը, Տորք Զաքարյանը, հայ ազգային բնանկարի և պատմանկարի հիմնադիրներ Գեվորգ Բաշինջաղյանն ու Վարդգես Սուրենյանցը, նկարչությամբ տարված դերասան Պետրոս Ադամյանը, բանաստեղծ Տիրան Զրաքյանը (Ինտրա) և ուրիշներ⁴⁵: Այվազովսկուն անձամբ ճանաչել, նրա մասին արտահայտվել, նրան հոգվածներ ու չափածո տողեր են նվիրել արևելահայ և արևմտահայ անվանի գրողներ ու բանաստեղծներ Երվանդ Շահագիզը, Հովհաննես Թումանյանը, Հակոբ Պարոնյանը, Ղազարոս Աղայանը, Ալեքսանդր Ծատուրյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Արփիար Արփիարյանը, Վահան Մալեգյանը, ճարտարապետ Սարգիս Պալյանը, կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը, ջութակահար Հով-

⁴⁵ Հայ ծովանկարիչների հետ Հովհաննես Այվազովսկու հանդիպումների և նրանց ստեղծագործության վրա թողած ազդեցության վերաբերյալ բազմաթիվ հայտնի, նաև նորահայտ փաստեր ու վկայություններ է բերում արվեստաբան Արա Հակոբյանը վերջերս հրատարակված իր աշխատության մեջ (տե՛ս. **Հակոբյան Արա**, Հայազգի ծովանկարիչները, Երևան, 2017):

հաննես Նալբանդյանը⁴⁶, բանասերներ ու լեզվաբաններ Կարապետ Եզյանը, Նորայր Բյուզանդացին, Հակոբբոս Տաշյանը, պատմաբան Լեոն, Ամենայն հայոց կաթողիկոսներ Ներսես Աշտարակեցին, Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին, Մկրտիչ Ա Վանեցին (Խրիմյան Հայրիկ), Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքներ Մատթեոս Չուխաճյանը և Մաղաքիա Օրմանյանը, եպիսկոպոս Խորեն Ստեփաննես, Օսմանյան կայսրության նախարար, պետական գործիչ ու դիվանագետ Հարություն Տատյանը և այլք, որոնցից մի քանիսին ուղղված իր նամակները ծովանկարիչը շարադրել է հայերենով ու եզրափակել *Այվազեան* ստորագրությամբ:

Այվազովսկին մշտապես հոգացել է Ղրիմի հայության կարիքները: Նա խոշոր գումարներ է հատկացրել տեղի ծխական դպրոցին, ընչազուրկ հայերի օգտին կազմակերպել բարեգործական ցուցահանդեսներ, իսկ մահից մեկ տարի առաջ Թեոդոսիայի Ս. Սարգիս եկեղեցուն կտակել իր կալվածքների մի մասը⁴⁷:

Հովհաննես Այվազովսկին 1890-ականներին Արևմտյան Հայաստանում, Կոստանդնուպոլսում և Օսմանյան կայսրության հայաշատ այլ քաղաքներում տեղի ունեցած հայերի կոտորածների, հայկական հոգևոր կենտրոնների ու մշակութային օջախների ավերման, հրդեհման և սրբապղծման զարհուրելի երևույթներին արձագանքած առաջին հայ արվեստագետներից էր⁴⁸:

⁴⁶ Տե՛ս, օրինակ. **Աղասյան Արարատ, Ասատրյան Աննա**, Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ, Երևան, 2015, էջ 102, 114, 140-141:

⁴⁷ Տե՛ս. **Микаелян В.А.** И.К. Айвазовский и его соотечественники, стр. 61.

⁴⁸ Տե՛ս. **Աղասյան Արարատ**, Համիդյան ջարդերի և Մեծ եղեռնի արտացոլումը հայ կերպարվեստում (1894-1923 թթ.) // Պատմաբանասիրական հանդես,

Նա սրտացավ վերաբերմունք, բարոյական և նյութական օգնություն էր ցուցաբերում թշվառ վիճակում հայտնված իր հայրենակիցներին՝ սեփական կտավների վաճառքից ստացված գումարներ տալիս տուժած հայերի ընտանիքներին, զբաղվում Ղրիմում նրանց տեղավորելու հարցով:

Այվազովսկուն նվիրված մասնագիտական գրականության մեջ բազմիցս է հիշատակվել, որ 1896 թ. օգոստոսին Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը ծովանկարչին նամակ է հղել, որում՝ տեղեկացնելով նրան հայկական ջարդերի մասին, նկարչին հորդորել է վրձնել այդ բռնություններն արտացոլող ու դատապարտող մի կտավ⁴⁹: Սեպտեմբերի 8-ի հետադարձ նամակում Այվազովսկին պատասխանել է. «...Վեհափառ Տէր, խորին ցաւով վշտացած է սիրտս անբախտ հայոց չլսուած, չտեսնուած կոտորածով: Ձեր Վեհափառութիւնը այդտեղ, մենք այստեղ և ամենքն իրենց տեղեր կուլանք և կողբանք մեր թշուառ, կորստեան մատնուած հայոց վերայ և կխնդրենք աստուածային գթութիւն...»⁵⁰: Դառնալով կաթողիկոսի առաջարկությանը՝ Այվազովսկին գրել է. «Ձեր օծութիւնը շատ զգայուն և գեղեցիկ առաջարկութիւն կանէք ինձ նկարել կարմիր գոյնով հայոց կոտորածի պատկեր, արեան դաշտեր և լեռներ և վշտահար Հայոց Հայրիկին աւերակաց վերայ: Եթե Տէրը կհաճի ինձ դեռևս կեանք պարգևել, կուգա օր, որ կկատարեմ այդ սրտաշարժ առաջարկութիւնը»⁵¹: Այվազովսկուն այդպես էլ չի վիճակվել իրականացնել Խրիմյանի պատվերը: Համենայն դեպս, մեզ չի

Երևան, 2015, № 2, էջ 13-29:

⁴⁹ Տե՛ս, օրինակ. **Սարգսյան Մինաս**, Մեծ ծովանկարչի կյանքը, էջ 386:

⁵⁰ Տե՛ս. Айвазовский. Документы и материалы, стр. 277:

⁵¹ Նույն տեղում:

հասել նման բովանդակությամբ՝ ծովանկարչի ստորագրած որևէ նկար: Բայց փոխարենը նա կյանքի վերջում ստեղծել է համիդյան ջարդերին վերաբերող մի շարք յուղաներկ կտավներ ու գրչանկարներ, որոնցից մի քանիսը պահպանվել են, իսկ մյուսները հայտնի են լուսանկարներով: Իր հոգեկան ապրումները նկարիչն արտահայտել է «Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թվականին» մեծադիր կտավում (1896), ինչպես նաև 1897-ին ավարտված «Նավերի բեռնումը», «Գիշեր: Ողբերգություն Մարմարա ծովում», «Թուրքերը հայերին խորտակում են ծովում» յուղաներկ աշխատանքներում: Վերջին երկու ստեղծագործությունների գծանկար էսքիզները զետեղվել են նույն թվականին հրապարակախոս, գրական և հասարակական գործիչ Գրիգոր Զանշյանի նախաձեռնությամբ Մոսկվայում լույս տեսած «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» մեծահատոր ժողովածուի էջերում⁵², որի գեղարվեստական ձևավորման և պատկերազարդման աշխատանքներին մասնակցել են նկարիչներ Վարդգես Սուրենյանցը, Գրիգոր Գաբրիելյանը և Պոլ Ասատուրը (Պողոս Տեր-Ասատրյանց): Հատորում ընդգրկված՝ Հովհաննես Այվազովսկու կենսագրական համառոտ ակնարկից տեղեկանում ենք, որ այդ գծանկարները նա կատարել է խմբագրության պատվերով և Մոսկվա ուղարկել Նիսից⁵³:

1900 թվականի ապրիլի 19-ին՝ «Թուրքական նավի պայթյունը» ծովային մարտանկարն անավարտ թողած, արվեստագետը գիշերվա ժամին հանկարծամահ է եղել: Նրան հուղարկավորել են Թեոդոսիայի Ս. Սարգիս հայկական եկեղեցու բա-

⁵² Տե՛ս. Братская помощь пострадавшим в Турции армянам (Литературно-научный сборник). Москва, 1897, стр. 74-75, 80-81 (второй отдел).

⁵³ Նույն տեղում, էջ 500 (առաջին բաժին):

կում⁵⁴: Նկարչի գերեզմանին դրված մարմարե սպիտակ դամբա-
նաքարի վրա փորագրված է Մովսես Խորենացու «Հայոց պատ-
մության» երրորդ գրքից քաղված հետևյալ տողը. «...մահկա-
նացու ծնեալ՝ անմահ զիրն յիշատակ եթող...»:

⁵⁴ Նկարչի այրու կարգադրությամբ՝ Հովհաննես Այվազովսկու դամբարանը
բաժանվել է երկու մասի, որոնցից երկրորդում ամփոփված է 1944-ին կյան-
քից հեռացած Աննա Բուռնազյանի աճյունը:

Иван Константинович Айвазовский (1817-1900) был первым художником армянского происхождения, кто еще при жизни удостоился широкого международного признания и чьи лучшие полотна были причислены к наиболее значительным произведениям, когда-либо созданным в истории изобразительного искусства. Он поднял на новый художественный уровень жанр марины – при том, что за свою долгую и плодотворную творческую жизнь, наряду с многочисленными видами моря и сценами морских сражений, писал также сухопутные, пронизанные солнцем и дышащие зимней стужей пейзажи, а также портреты и автопортреты, жанровые картины, полотна, вдохновленные библейскими и историческими образами и сюжетами.

Айвазовский начал творить в период позднего романтизма и до конца оставался верен этому идейно-художественному направлению, не поддавшись новым течениям, нашедшим распространение в европейском и русском искусстве того времени. Пожалуй, именно поэтому некоторые из молодых критиков последней четверти XIX века – как, например, апологет “нового искусства”, художник-эстет и историк искусства Александр Бенуа – считали его уже отжившим свой век живописцем, произведения которого якобы “устарели” и более не отвечали насущным идейно-эстетическим запросам эпохи¹.

В то же время многие из прогрессивных деятелей русского искусства и литературы, знавшие художника и следившие за его творчеством, такие как Иван Крылов, Алексей Венецианов,

¹ См., например: **Бенуа А.Н.** История русской живописи в XIX веке. Санкт-Петербург, 1902, стр. 201-202.

